«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Նախադպրոցականի կարողությունների ձևավորման հիմնահարցը

Հաստատություն՝ ք. Արտաշատի թիվ 7 մանկապարտեզ

Դաստիարակ՝ Թադևոսյան Վարդուշ

Ղեկավար՝ Ավետիսյան Ժաննա

2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն----------3
2. Նախադպրոցական տարիքի երեխայի կարողությունները----------4
3. Նախադպրոցական տարիքի երեխայի ընդհանուր բնութագիրը----------7
4. Հետազոտական աշխատանք ----------16
5. Եզրակացություն----------19
6. Գրականության ցանկ----------20

Ներածություն

Ժամանակաշրջանը, որում մենք ապրում ենք, երբ մարդու ամենատարրական, առօրէական ամենահասանելի գործողությունները կարող են փոխարինվել ռոբոտամեքենայական սարքավորումներով, երբ մեկ վահանակ կամ ռոբոտ-հրահանգիչ կարող է վարել մի ամբողջ տնտեսություն, մեր՝ մանկավարժներիս և, առհասարակ, սերունդների կրթման մասին մտածող ցանկացած գիտակից անհատի համար առաջնային խնդիր է դառնում երեխաների կարողությունների և հմտությունների զարգացման հարցը. չէ՞ որ ավտոմատացումը տարածվում է նաև երեխաների շրջանում՝ խաթարելով վերջիններիս զարգացման բնականոն ընթացքին:

Նկատի առնելով վերոնշյալ հանգամանքները՝ հրատապ և արդիական ենք համարել երեխաների կարողությունների ձևավորման հիմնահարցը: Մեր հետազոտությունը և աշխատանքը ներառում է նախադպրոցական տարիքը՝ հաշվի առնելով, որ այս տարիքն ամենասենզիտիվ փուլն է նորագոյացությունների ձևավորման համար:

Կարողությունների ձևավորման բարդությունը պայմանավորված է նաև նոր սերնդի հոգեկան առանձնահատկությունների հետ. չէ՞ որ այժմ մենք գործ ունենք 21-րդ դարի «ինդիգոների» հետ, ովքեր այլևս անհանդուրժող են դաստիարակության ավտորիտար տարբերակին: Այսօրվա ժամանակի հրամայականն է կրթել երեխային՝ ենթարկվելով նրա ցանկությանը: Տարիներ առաջ՝ մեր նախնիների համար, թերևս, սա աբսուրդի հասնող կոնցեպցիա կդիտարկվեր, բայց այսօր երեխաների համար կողմնակի՝ ինտերնետային ինֆորմացիան շատ այլակերպ է ազդում վերջիններիս վրա՝ շատ դեպքերում հանգեցնելով անոմալ աքսելերացիաների, օտարացման կամ աուտիզմի, գերակտիվության կամ ինֆանտիլ վարքի, իսկ երբեմն նաև՝ օժտվածության:

Երեխաների շփումն ու հաղորդակցումը լավագույնս ապահովելու, ճանաչողական հետաքրքրությունների, կարողությունների համար խթան կարող է դառնալ ուսուցումն հետաքրքիր դարձնելը, ուսուցման գործընթացում ստեղծագործական մթնոլորտի ապահովումը, ինչպես նաև բարդ, բայց հրապուրիչ խնդիրների ու խաղերի առաջադրումը:

Նախադպրոցական տարիքի երեխայի կարողությունները

Կարողությունը գործողության նոր միջոցների տիրապետման միջանկյալ փուլ է, որը հիմնվում է գիտելիքների և որոշակի խնդիրներ լուծելու պրոցեսում այդ գիտելիքների ճիշտ օգտագործման վրա, սակայն որոնք դեռևս հմտությունների մակարդակ չեն հասել [1]:

Հարկավոր է կարողությունները չշփոթել երեխայի ընդունակությունների կամ գիտելիքների հետ:

Կարողունակությունները նախադպրոցական տարիքի երեխաների կողմից ուսումնառության և դաստիարակության գործընթացում ձեռք բերված գիտելիքի, հմտությունների, արժեքների և դիրքորոշումների հիման վրա ըստ իրավիճակի արդյունավետ ու պատշաճ արձագանքելու ձևեր են: Նախադպրոցական տարիքի երեխաների կարողունակությունները ձևավորվում են ուսուցման և դաստիարակության կազմակերպման միջոցով [6]:

Նախադպրոցական տարիքի երեխաների զարգացման և կրթական վերջնարդյունքները նկարագրում են, թե ինչ պիտի իմանա, կարողանա անել և հասկանա վեց տարեկան երեխան: Վերջնարդյունքներն ուղղված են կարողունակությունների ձևավորմանը:

Նախադպրոցական կրթության կարողունակություններն են՝

1) լեզվական և հաղորդակցական կարողունակություն՝ երեխան տիրապետում է գրական հայերենին, հաղորդակցվում տարբեր իրավիճակներում և միջավայրերում, դրսևորում խոսքային և ոչ խոսքային ակտիվություն՝ մասնակցություն ունենալով հասարակական կյանքին: Ընդունակ է ճանաչել բանավոր ներկայացվող երևույթները, ըմբռնել, նկարագրել, մեկնաբանել դրանք, ներկայացնել բացատրություններ [6]:

2) ճանաչողական և մոտիվացիոն կարողունակություն՝ երեխան, իր տարիքին համապատասխան, ընդունակ է պատճառահետևանքային կապեր տեսնել երևույթների, իրադարձությունների միջև, ճանաչել առարկաների և օբյեկտների կապերը, հարաբերությունները, նոր խնդիրներ լուծել: Դրսևորում է ակտիվություն, հետաքրքրասիրություն, ճանաչողական հետաքրքրություն աշխարհի, առարկաների և երևույթների, ինչպես նաև հարաբերությունների կառուցման հանդեպ[6]:

3) ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն՝ երեխան ճանաչում է իր արտաքին առանձնահատկությունները, ձեռք է բերում սեռադերային պատկերացումներ: Երեխան ունի պատկերացում սեփական հնարավորությունների մասին, վստահություն սեփական ուժերի և կարողությունների հանդեպ: Ընդունակ է ինքնակազմակերպվելու, դրսևորում է ինքնուրույնություն և ինքնասպասարկման հմտություններ: Գործողություններում դրսևորում է նպատակաուղղվածություն և կենտրոնացվածություն: Երեխան ճանաչում է սեփական և այլոց հույզերը, կարողանում է կառավարել սեփական հույզերը: Ճանաչում է մեծահասակների և հասակակիցների փոխհարաբերություններում սահմանված վարքային կանոնները և դրսևորում է սոցիալապես ընդունված նորմերին համապատասխան վարք: Շփման մեջ նախաձեռնող և կառուցողական է, դրսևորում է ընկերակցելու, համագործակցելու հմտություններ [6]:

4) ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակություն՝ նախադպրոցական տարիքում երեխան տիրապետում է բարեվարքության և սոցիալական արդարության պարզագույն կանոններին. դրսևորում է հարգանք և հոգատարություն շրջապատի հանդեպ, գնահատում է արարքների բարոյական ուղղվածությունը [6]:

5) **թվային և մեդիա կարողունակություն՝**

երեխան ունի տարրական պատկերացումներ մեդիայի վերաբերյալ, կողմնորոշվում է մեդիա բազմազանության մեջ, մեծահասակի աջակցությամբ գնահատում է ներկայացված տեղեկատվությունը, այն համադրում սեփական պատկերացումներին՝ դրսևորելով քննադատական և ընտրողական մոտեցում: Երեխան կարողանում է օգտվել մեդիա տարրական գործիքներից՝ միևնույն ժամանակ հասկանալով դրանց կիրառման հնարավոր վտանգները և այդ հարցում սեփական պատասխանատվությունը: Երեխան դրսևորում է առարկաների, երևույթների մոդելավորման և ստեղծագործական կարողություններ, տարբերում է իրական և վիրտուալ աշխարհները, հասկանում դրանց տարբերությունները [6]:

6) **մշակութային կարողունակություն՝**

երեխան կարողանում է գնահատել գեղեցիկը, ճանաչում և վերլուծում է հանրահայտ հայ և արտասահմանյան մանկագիրների գեղարվեստական

ստեղծագործությունները, ճանաչում է ազգային և համաշխարհային մշակութային նմուշների ինքնատիպությունը: Դրսևորում է ընդգծված հետաքրքրություն գեղարվեստական գործունեության հանդեպ, ունակ է երաժշտության, կերպարվեստային գործունեության տարբեր տեսակների, ազգային տոների ու ավանդույթների միջոցով արտահայտելու սեփական հույզերը, զգացմունքներն ու տպավորությունները[6]:

7) **մաթեմատիկական և տեխնիկական կարողունակություն**՝

երեխան կարողանում է կատարել պարզ մաթեմատիկական գործողություններ, համեմատում, հետազոտում է առարկաները և երևույթները, գտնում է տարբեր խնդիրների լուծումներ, ճանաչում է թվանշանները, տիրապետում է նախաթվային և թվային հասկացություններին. երեխան կարողանում է որոշել առարկաների քանակը, համեմատել դրանք ըստ մեծության, չափի, ձևի և գույնի, տարբերակել մասը և ամբողջը, երկրաչափական պատկերներն ըստ հատկանիշների: Կարողանում է առարկաները տարբերակել նաև ըստ նյութի [6]:

8) տնտեսական կարողունակություն՝երեխան կարողանում է համարժեք ճանաչել և վերլուծել մեծերի աշխատանքը և դրանից ստացված արդյունքները: Հասկանում է շրջակա միջավայրի պահպանման գործում սեփական դերը, նշանակությունը և մասնակցում է այդ գործընթացում [6]:

9) ֆիզիկական կուլտուրայի կարողունակություն՝երեխան պատկերացում ունի ֆիզիկական վարժությունների առողջարարական նշանակության, առողջ սննդի, առողջ ապրելակերպի վարման հիմնական կանոնների՝ օրգանիզմի կոփման, օրվա ռեժիմի, հիգիենիկ կանոնների, ճիշտ կեցվածքի պահպանման մասին [6]:

Նախադպրոցական տարիքի երեխայի ընդհանուր բնութագիրը

Նախադպրոցական տարիքն ընդգրկում է երեխայի կյանքի 3-ից 6 տարեկանը: Այս տարիքը շրջաբաժանվում է 3 փուլերի՝ վաղ, միջին և ավագ: Շարունակվում է երեխայի օրգանիզմի արագ հասունացումը: Ընդհանուր աճին զուգընթաց տեղի է ունենում հյուսվածքների և օրգանների անատոմիական ձևավորում և ֆունկցիոնալ զարգացում, մեծ նշանակություն ունի կմախքի ոսկրացումը, մկանների զանգվածի մեծացումը: Ուղեղի կշիռն ավելանում է 1110-ից մինչև 1350 գրամ: Ուժեղանում է մեծ կիսագնդերի կեղևի կարգավորող դերը, ենթակեղևային կենտրոնների նկատմամբ նրա վերահսկողությունը: Աճում է պայմանական ռեֆլեքսների առաջացման արագությունը, հատկապես ինտենսիվորեն է զարգանում 2-րդ ազդարարային համակարգը:

Ն/դ տարիքը բնորոշվում է երեխայի զարգացման սոցիալական նոր իրադրությամբ: Երեխան տարրական պարտականություններ է ձեռք բերում: Որակապես նոր բնույթ են ստանում ն/դ-ի փոխհարաբերությունները մեծահասակների և իր հասակակիցների հետ: Ն/դ տարիքում փոփոխություններ է կրում մտածողությունը, շատ արագ զարգանում է մտածական խնդիրների շրջանակը, ն/դ-ն առավել շատ է ձգտում ինքնուրույն լուծել իր առջև ծառացած խնդիրները: Մտածողության գործընթացների անցումը ներքին պլան տեղի է ունենում պրակտիկ գործունեության վերակառուցման հետևանքով:

Կրտսեր ն/դ-ները սովորաբար չեն վերլուծում խնդրի լուծման պայմանները և ուղղակիորեն ձեռնամուխ են լինում խնդրի լուծմանը՝ ցանկացած ճանապարհով, կատարում են բազմաթիվ փորձեր, որի արդյունքում ստանում են լուծումներ, որոնք հանկարծակի են լինում: Ստացած արդյունքների նկատմամբ չի դրսևորվում քննադատական վերաբերմունք և նրանք չեն նկատում իրականության մեջ գոյություն ունեցող կապերը և կոպտորեն խախտում են դրանք:

Միջին ն/դ-ները խնդիրներն իմաստավորում և դրանց լուծման եղանակներն իրագործում են բուն գործունեության կատարման ընթացքում: Նրանց օգնում է խոսքը՝ ուղղորդելով գործունեությունը [5]:

Ավագ ն/դ-ների մոտ փոխվում է հարաբերությունը զգայական ըմբռնման, պրակտիկ գործունեության և խոսքի միջև: Այժմ երեխան խնդիրը լուծելիս կարող է

միանգամից պրակտիկ գործողություններ չկատարել, այլ այն լուծել մտքում, այնուհետև վերագրել համապատասխան պրակտիկ գործունեությանը. երեխան, նայելով նկարին, նախ մտքում պատկերացնում է իրենից պահանջվող առաջադրանքի լուծումը, այնուհետև այն բառերով արտահայտում կամ իրականացնում գործողությունների միջոցով:

Ն/դ տարիքում շարունակվում է մտածողության գործընթացների զարգացումը, այն չի վերանում, այլ կատարելագործվում է և անցնում նոր, ավելի բարձր մակարդակի, որը բնութագրվում է հետևյալ առանձնահատկություններով. ավագ ն/դ տարիքում խնդրի լուծմանը նախորդում է մտածողության մեջ այն լուծելը, որը տրվում է բառային ձևակերպմամբ, մտածական գործընթացները մեծ փոփոխություններ են կրում, առարկայական մտածողությանը փոխարինելու է գալիս բառային, պլանավորող, քննադատական մտածողությունը:

Ն/դ-ների զարգացմանը մեծապես նպաստում է նախադպրոցական հաստատություններ հաճախելը: Հետազոտությունները ցույց են տալիս, որ մանկապարտեզներ հաճախած երեխաների հոգեկան զարգացման ընդհանուր մակարդակն ու դպրոցում սովորելու պատրաստականության աստիճանը միջին հաշվով ավելի բարձր են՝ համեմատած այն երեխաների, ովքեր չեն հաճախել մանկապարտեզ: Սա պայմանավորված է շփման շրջանակների մեծության հետ: Երեխաները շփվելով ձեռք են բերում նորանոր հմտություններ, նրանց մեջ զարգանում է մրցակցության գաղափարը, նոր գիտելիքներ, կարողություններ և հմտություններ ձեռք բերելը:

Ն/դ տարիքում զարգանում է նաև երեխայի ակտիվությունը, որում տեղի են ունենում նշանակալից փոփոխություններ: Եթե 3 տարեկանում երեխան հաճույքով տարբեր շարժումներ է կատարում և դրանից բավականություն ստանում, ապա ավագ ն/դ-ները իրենց ակտիվությունն ուղղում են գործունեության միջոցով ցանկալի արդյունքների ձեռքբերմանը: Ակտիվության փոփոխության հետ մեկտեղ երեխայի մոտ ի հայտ են գալիս նոր որակներ՝ ոչ միայն առարկաների հետ շփվելիս, այլ նաև մարդկանց: Փոխվում է նրա կենսափորձը, մարդկանց հետ շփման բովանդակությունն ու ձևը:

Ն/դ տարիքը համարվում է երեխայի հոգեսեռական զարգացման առաջին փուլը և այս տարիքում հոգեսեռական զարգացման խաթարումներն իրենց

հետևանքն են թողնում անձի ողջ կյանքի ընթացքում: Այդ պատճառով կարևորվում է սեռական առումով առողջ անձի ձևավորումը դեռևս այս տարիքից: Սեռերի միջև հոգեբանական տարբերությունների վերաբերյալ ժամանակակից տվյալները վկայում են, որ տղաներն ու աղջիկները երկու տարբեր աշխարհներ են և նրանց չի կարելի միանման ընկալել:

Երեխան սեփական ես-ն առաջին անգամ իմաստավորում է սեռի տեսանկյունից, այսինքն՝ դեռևս չառանձնացնելով իրեն մյուսներից և չկոչելով ինքն իրեն «ես», նա, այնուամենայնիվ, կարող է նշել իր սեռը: Այն ժամանակ, երբ երեխայի խոսքում հայտնվում է «ես» դերանունը, նա արդեն կարող է բնորոշել իր սեռը: Սեռային ինքնագիտակցության զարգացմանը զուգահեռ ընթանում են նույնականացման և սեռային տիպականացման գործընթացները, տեղի է ունենում սեռային դերերի և սեռադերային վարքի յուրացում: Որքան ավելի համապատասխան լինեն ծնողների հրահանգները՝ կապված երեխայի սեռադերային վարքի հետ, որքան ավելի հստակ ընկալվի երեխայի առնականությունը կամ կանացիությունը, այնքան ավելի համարժեք կընթանա ն/դ-ի սեռային ինքնագիտակցության զարգացման գործընթացը: Դերերի սխալ բաշխման հետևանքով հնարավոր է որոշակի բացասական երևույթների դրսևորում, որոնցից մեկը տրանսսեքսուալիզմն է: Այն հոգեբանական տեսանկյունից համարվում է սեռական ինքնագիտակցության խանգարում, երբ անձն ի ծնե պատկանում է մի սեռի, սակայն իրեն վերագրում է հակադիր սեռի դերը: Պարզվել է, որ այն կարող է ունենալ հոգեբանական նախահիմք՝ սեռին վերագրվող սոցիալական դերերի սխալ բաշխումը: Զարգացման սկզբնական շրջանում երեխան չի գիտակցում իր սեռական ստատուսը. մեծահասակն է երեխային կողմնորոշում նրա սեռին բնորոշ դերը և եթե մեծահասակն անգիտակցաբար երեխային հակադիր սեռին բնորոշ դեր է վերագրում, դա կարող է ճակատագրական լինել:

Ն/դ տարիքում փոփոխություններ է կրում նաև երեխայի զգացմունքների բովանդակությունը: Երեխայի մեջ ամրանում է հարազատների նկատմամբ համակրանքի զգացումը, կարեկցումը, նա հատկապես նուրբ զգացմունքներ է տածում մոր նկատմամբ: Համակրանքի զգացումը այս տարիքում վերածվում է նաև ընկերության և բարեկամության զգացմունքների նախնական ձևերի:

Ն/դ տարիքում էականորեն փոխվում են նաև երեխայի վարքի դրդապատճառները: Կրտսեր ն/դ-ը, ինչպես վաղ մանկության տարիքում, գործում է պահի ազդեցությամբ առաջացած իրադրային ցանկությունների և զգացմունքների ազդեցությամբ, որոնք առաջանում են տարբեր պատճառներով: Երեխան չի կարող ինքն իրեն լիարժեք հաշիվ տալ, թե ինչը ստիպեց նրան այս կամ այն կերպ գործել: Ավագ ն/դ-ի արաքները դառնում են ավելի գիտակցված, շատ դեպքերում նա կարող է բավական խելամիտ պատասխանել, բացատրել, թե ինչու է այդ իրավիճակում այդպես վարվել:

Առանձնացվում են դրդապատճառների խումբ, որոնք ընդհանուր առմամբ բնորոշ են ն/դ-ների վարքին: Առաջին հերթին դրանք այն դրդապատճառներն են, որոնք կապված են երեխաների՝ մեծահասակների աշխարհի նկատմամբ ունեցած հետաքրքրության հետ, նրանց մեծերին նման լինելու ձգտման հետ: Դա ակնհայտ երևում է դերային խաղում, որում երեխային ղեկավարում է մեծահասակին նմանվելու ցանկությունը:

Դրդապատճառների մյուս խումբը, որն անընդհատ դրսևորվում է երեխաների վարքում, խաղային դրդապատճառներն են, որոնք կապված են խաղի նկատմամբ հետաքրքրության հետ: Դուրս գալով խաղային գործունեության սահմաններից՝ դրանք երանգավորում են երեխայի վարքը՝ դրանով անկրկնելի առանձնահատկություն տալով ն/դ-ի մանկությանը: Դրանց շնորհիվ ն/դ-ի ամբողջ գործունեությունը վերածվում է խաղային գործունեության:

Ն/դ տարիքում զարգանում են ինքնասիրության, ինքնահաստատման դրդապատճառները: Դրանց միջոցով երեխան իրեն առանձնացնում է ուրիշներից և որպես իր վարքի մոդել՝ ընտրում է մեծահասակի վարքը: Ինքնահաստատման ձգտման դրսևորումներից մեկը երեխաների ձգտումն է խաղերում գլխավոր դերը կատարել:

Երեխաների գործունեության բարդացման հետ ձևավորվում են նաև իմացական և մրցակցության դրդապատճառները: Արդեն 3-4 տարեկանում երեխան շրջապատողներին անընդհատ տալիս է բազմաթիվ հարցեր. «Ի՞նչ է սա», «Իսկ ինչպե՞ս», «Ինչու՞» և այլն: Ավելի ուշ գերակայող է դառնում «Ինչու՞» հարցը: Հաճախ երեխաները ոչ միայն հարցնում են, այլ նաև փորձում են գտնել հարցերի պատասխանները՝ իրենց ունեցած փորձի հիման վրա:

Հասակակիցների հետ համատեղ գործունեության զարգացումը՝ հատկապես ըստ կանոնների խաղի զարգացումը, նպաստում է երեխայի ինքնահաստատման ձգտմանը, առաջանում են նոր դրդապատճառներ՝ ձգտումը հաղթել և լինել առաջինը: Այս տարիքում երեխաներին առաջադրվող խաղերը հենվում են հենց այս դրդապատճառների վրա: Ն/դ տարիքում շարունակվում է երեխայի իմացական գործընթացների զարգացումը: Ուշադրության, հիշողության, երևակայության զարգացումն ընթանում են զուգահեռ և փոխկապակցված:

Ն/դ տարիքի սկզբում երեխայի ուշադրությունն արտացոլում է հետաքրքրությունը շրջապատող առարկաների և նրանց հետ կատարվող գործողությունների նկատմամբ: Երեխան կենտրոնացած է այնքան ժամանակ, քանի դեռ չի մարել նրա հետաքրքրությունը: Երեխան միշտ իր ուշադրությունը տեղափոխում է դեպի նոր առարկան, այդ պատճառով երեխաները հազվադեպ են երկար ժամանակ զբաղվում միևնույն գործողությամբ: Գործունեության բարդացման, ընդհանուր մտավոր զարգացման հետ մեկտեղ ուշադրությունը ձեռք է բերում կենտրոնացվածություն և կայունություն: Այսպես, եթե կրտսեր ն/դ-ները կարող են միևնույն խաղը խաղալ 30-50 րոպե, ապա ավագ ն/դ-ների խաղի տևողությունը հասնում է մինչև մեկուկես ժամի: Դա բացատրվում է նրանով, որ խաղում արտացոլվում են մարդկանց ավելի բարդ գործողություններ և փոխհարաբերություններ, և դրա նկատմամբ հետաքրքրությունը պահպանվում է շնորհիվ այն բանի, որ նրանում անընդհատ նոր տարրեր են մտցվում: Ուշադրության կայունությունը մեծանում է նաև նկարները դիտելիս, պատմվածքներ, հեքիաթներ լսելիս: Ն/դ-ի ուշադրության հիմնական փոփոխությունն այն է, որ առաջին անգամ նա կարողանում է ղեկավարել այն՝ գիտակցաբար ուղղորդել որոշակի առարկաների, երևույթների վրա և դրանք պահել իր ուշադրության կենտրոնում: Չնայած դրան՝ այս տարիքում գերակայում է ոչ կամածին ուշադրությունը: Ն/դ-ի ուշադրության կազմակերպման յուրօրինակ միջոց է խոսքը: Սկզբում մեծահասակն է ուղղորդում երեխայի ուշադրությունը՝ բառային հրահանգների միջոցով, երեխային հիշեցնում է, թե ինչ պետք է անի, ինչ գործողություն պետք է կատարի: Ավելի ուշ երեխան ինքն է սկսում բառերով անվանել այն առարկաներն ու երևույթները, որոնց հարկավոր է ուշադրություն դարձնել՝ ցանկալի արդյունքին հասնելու համար: Խոսքը որպես երեխայի

ուշադրության կազմակերպման և կարգավորման միջոց օգտագործելը նպաստում է նրան, որ ոչ կամածին ուշադրության հիմքի վրա սկսում է զարգանալ կամածին ուշադրությունը:

Կրտսեր ն/դ-ի հիշողության մեջ գերակայում են ոչ կամածին մտապահումն ու վերարտադրումը: Երեխան դեռ չի կարողանում իր առջև նպատակ դնել, մտապահել և վերարտադրել ինչ-որ բան և առավել ևս նա դեռ չի կարողանում հատուկ միջոցներ կիրառել:

Մտապահման և վերարտադրման կամածին ձևերը սկսում են ձևավորվել միջին ն/դ տարիքում և էականորեն զարգանում են ավագ ն/դ տարիքում: Կամածին մտապահման համար արդյունավետ պայմաններ են ստեղծվում խաղային գործունեության մեջ, երբ մտապահումը հանդիսանում է երեխայի կողմից իր վրա վերցրած դերի հաջող իրականացման պայման: Մտապահման և վերարտադրման միջոցներն երեխան սովորում է մեծահասակների շնորհիվ: Չնայած կամածին մտապահումը էական առաջընթաց է ապրում, բայց անգամ ն/դ տարիքի վերջում գերակայող է մնում ոչ կամածին հիշողությունը: Կամածին մտապահմանը և վերարտադրմանը երեխաները դիմում են համեմատաբար ավելի քիչ և հազվադեպ, երբ կան համապատասխան առաջադրանքներ, որոնք պահանջում են դրանց առկայությունը: Ոչ կամածին մտապահումը մինչև ն/դ տարիքի վերջը մնում է ավելի արդյունավետ, քան միևնույն նյութը կամածին մտապահելը:

Մանկան երևակայության զարգացումը կապված է վաղ մանկության հետ, երբ երեխան առաջին անգամ ընդունակություն է ցուցաբերում փոխարինել մի առարկան մյուսով և օգտագործել մի առարկան մյուսի փոխարեն: Երևակայության հետագա զարգացումը տեղի է ունենում խաղային գործունեության ընթացքում, որում սիմվոլային փոխարինումները շատ հաճախ են և բազմաբնույթ առարկաների միջոցով են տեղի ունենում: Ն/դ տարիքում երևակայության զարգացման մասին դատում են ոչ միայն ըստ այն պատկերացումների և դերերի, որոնք երեխաները վերցնում են իրենց վրա խաղի ընթացքում, այլ նաև նրանց ստեղծագործության նյութական արդյունքների վրա, մասնավորապես՝ նկարների և ձեռքի աշխատանքների [2]:

Ն/դ տարիքի սկզբում երեխայի մոտ գերակշռում է ռեպրոդուկտիվ երևակայությունը, որի դեպքում երեխան մեխանիկորեն վերարտադրում է ստացած

տպավորությունները պատկերների տեսքով: Դրանք կարող են լինել տպավորություններ, որոնք երեխան ստանում է իրականությունն անմիջականորեն ընկալելիս, պատմվածքներ, հեքիաթներ լսելիս, մուլտֆիլմեր դիտելիս և այլն: Այս տիպի երևակայության դեպքում դեռ երեխան չունի ստեղծագործական վերաբերմունք պատկերավոր վերարտադրվող նյութի նկատմամբ: Այս դեպքում երևակայության պատկերները իրականությունը վերարտադրում են ոչ թե ինտելեկտուալ, այլ հիմնականում հուզական հիմքի վրա: Պատկերներում վերարտադրվում է այն ամենը, ինչը երեխայի վրա հուզական ներգործություն է ունեցել, նրա մոտ առաջացրել է հուզական արձագանքներ, հատկապես հետաքրքրել է երեխային: Ընդհանուր առմամբ երեխաների երևակայությունը այս շրջանում դեռ շատ թույլ է: 3 տարեկան երեխան դեռ չի կարող լիարժեք վերարտադրել իր հիշողությամբ նկարը, այն ստեղծագործաբար վերամշակել, մասնատել և հետագայում դրա մասերն առանձին օգտագործել նոր բանում:

Ավագ ն/դ տարիքում, երբ հիշողությունը ձեռք է բերում կամածնության տարրեր, երևակայությունը ռեպրոդուկտիվից, որը մեխանիկորեն վերարտադրում է իրականությունը, վերածվում է այն ստեղծագործաբար վերափոխողի: Այն միանում է մտածողության հետ, մտնում է գործողությունների պլանավորման գործընթացի մեջ: Արդյունքում երեխաների գործունեությունը կրում է գիտակցված, նպատակաուղղված բնույթ: Գործունեության գլխավոր տեսակը, որում դրսևորվում է երեխաների ստեղծագործական երևակայությունը, կատարելագործվում են, առաջ են գալիս սյուժետադերային խաղերը [3]:

Վաղ մանկության և ն/դ տարիքում երեխան յուրացնում է նոր ներքին հոգեբանական գործողություններ, որոնք նրան թույլ են տալիս լուծել բարդ ու բազմազան խնդիրներ: Նման գործողությունների աղբյուր են արտաքին կողմնորոշիչ գործողությունները: Ներքին գործողություններն ինքնաբերաբար չեն առաջանում, այլ այն կողմնորոշիչ գործողությունների արտաքին ձևերի ներքինի անցման միջոցով, որոնց օգնությամբ լուծվում են խնդիրները: Այսինքն, ինչպես վերը նշվեց տեղի է ունենում ինտերիորիզացիա, որի շնորհիվ յուրացվում են մեծահասակի գործողությունները: Արդյունքում տեղի է ունենում ներքին հոգեկան գործընթացների կատարելագործում:

Մեծահասակի հետ երեխայի հուզական շփումն առաջանում է դեռ այն ժամանակ, երբ նա չի տիրապետում առարկաների հետ պարզագույն գործողություններին: Նորածինը դեռևս չի հասկանում մեծահասակի բառերը, վարքը, բայց ուրախանում է, պատրաստ է երկար ժամանակն նայել նրան, ժպտալ. այդ ժամանակ ոչ թե առարկաներն են գրավում նրա ուշադրությունը, այլ մեծահասակի միջոցով է երեխան ուշադրություն դարձնում դրանց: Վաղ տարիքում մեծահասակին ուղղված հետաքրքրությունը փոխանցվում է առարկաներին, երեխան ընտելանում է առարկայական գործունեությանը և դրա շնորհիվ դառնում է ավելի ինքնուրույն, ձեռք է բերում մեծահասակի գործողություններն ընդօրինակելու ընդունակություն: Իսկ հաջորդ քայլն անցումն է դերային խաղին:

Այսպիսով, երեխայի պահանջմունքներն ու հետաքրքրություններն անընդհատ կապված են մեծահասակի հետ, դրանց զարգացման ու փոփոխման հետ մեկտեղ երեխայի հոգեկան զարգացման մեջ ի հայտ է գալիս առաջատար գործունեության նոր տեսակ: Առաջատար գործունեության նոր տեսակին անցումը կախված է հասարակությունում երեխայի կյանքի պայմանների ամբողջությունից: Առաջատար գործունեությունում դրսևորվում են երեխայի պահանջմունքներն ու հետաքրքրությունները, դրանցում տեղի են ունենում յուրաքանչյուր տարիքի համար կարևոր գործողությունների, անձի հոգեկան որակների և հատկանիշների ձևավորում և զարգացում: Յուրաքանչյուր առաջատար գործունեություն նպաստում է տվյալ տարիքին բնորոշ որակական առանձնահատկությունների գոյացմանը, կամ, ինչպես ասում են, տարիքի նորագոյացությանը: Բայց, իհարկե, երեխայի գործունեությունը չի սահմանափակվում միայն առաջատար գործունեությամբ, դրան զուգահեռ երեխան տիրապետում է նաև գործունեության այլ տեսակների:

Նախադպրոցական տարիքում առաջատարը խաղային գործունեությունն է ոչ թե նրա համար, որ այն առավել հաճախ է կրկնվում երեխաների զարգացման այս փուլում, այլ հակառակը՝ ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ երեխաներն օրվա ընթացքում մոտավորապես երեք ժամ են տրամադրում խաղին: Նշանակում է, որ գործունեության առաջատար լինելը այստեղ քանակով չէ պայմանավորված, այլ այս տարիքում խաղի միջոցով երեխաների մոտ ձևավորվում են հիմնական այն գործընթացներն, որոնք նախապատրաստում են երեխաների զարգացման նոր՝ առավել բարձր աստիճանի:

Խաղը գործունեություն է, երբ երեխաներն իրենց վրա են վերցնում մեծերի դերերը և ընդհանրացված ձևով խաղային իրավիճակում վերարտադրում մեծերի գործունեությունը և հարաբերություններն, այն ամենն, ինչ տեսնում են շրջապատող կյանքում և մարդկային փոխհարաբերություններում: Դերային կամ, ինչպես այլ կերպ են անվանում, ստեղծագործական խաղերի առաջացմանը, նպաստում են մի շարք հոգեբանական և սոցիալական նորագոյացումներ:

Պիաժեն դերային խաղերի ծագումը կապում էր սիմվոլիկ գործառույթի հետ, երբ երեխան մի գործողության տակ ենթադրում է, նկատի է ունենում մեկ այլ գործողություն, կամ մեկ առարկայի տակ՝ որևէ այլ առարկա: Երեխան զգայաշարժողական մակարդակից անցում է կատարում պատկերայինի, որը Պիաժեի կարծիքով մեծ առաջխաղացում է: Հատկապես խաղերում վառ դրսևորվում է երեխայի գիտակցության նշանային կամ սիմվոլիկ գործառույթը: Ն/դ տարիքում խաղը դառնում է առաջատար գործունեություն, որովհետև այն առաջացնում է որակական փոփոխություններ երեխայի հոգեկանում [4]:

Խաղային գործունեությունում ն/դ-ն ոչ միայն փոխարինում է առարկաները, այլ նաև իր վրա է վերցնում այս կամ այն դերը և սկսում է գործել այդ դերին համապատասխան: Չնայած նա կարող է իր վրա վերցնել ձիու կամ այլ կենդանու դեր, ավելի հաճախ նա կրկնօրինակում է մեծահասակին՝ մայրիկին, դաստիարակին, վարորդին, օդաչուին: Խաղում երեխան առաջին անգամ բացահայտում է մարդկանց փոխհարաբերությունները գործունեության ընթացքում, նրանց իրավունքներն ու պարտականությունները: Պարտականությունների առակայությունը հենց այն է, ինչ երեխան սպասում է՝ ստանձնելով որոշակի դեր:

Դերային խաղում երեխաներն արտացոլում են իրենց շրջապատող իրականության բազմազանությունը, նրանք վերարտադրում են դրվագներ՝ ընտանեկան, կենցաղային, մեծահասակների աշխատանքային գործունեությունից և փոխհարարբերություններից: Մանկական խաղերում արտացոլվող իրականությունը դերային խաղերի սյուժեն է: Որքան լայն է այն իրականությունը, որում գտնվում է երեխան, այնքան բազմազան են խաղի սյուժեները: Սյուժեների բազմազանության հետ ավելանում է նաև խաղի տևողությունը. 3-4 տարեկան երեխաների խաղը տևում է 10-15 րոպե, 4-5 տարեկանների մոտ հասնում է 40-50 րոպե, իսկ ավագ ն/դ-ների խաղերը կարող են ժամեր տևել և անգամ մի քանի օր:

Հետազոտական աշխատանք

Ն/դ-ի վարքում մեծ նշանակություն ունեն մեծահասակների և մյուս երեխաների հետ դրական փոխհարաբերություններ հաստատելու և պահպանելու դրդապատճառները: Մեծահասակների հետ դրական փոխհարաբերություններ ունենալու ձգտումը ստիպում է երեխային հաշվի առնել նրա կարծիքն ու գնահատականները, կատարել նրանց վարքի կանոնները: Ավելի շատ շփվելով իր հասակակիցների հետ՝ երեխայի համար մեծ կարևորություն է ձեռք բերում նաև նրանց հետ անընդհատ և դրական փոխհարաբերություններ ունենալը:

Ն/դ-ի հիշողությունը հիմնականում կրում է ոչ կամածին բնույթ, դա նշանակում է, որ երեխան իր առջև չի դնում ինչ-որ բան մտապահելու գիտակցված նպատակ: Մտապահումն ու վերհիշումը տեղի են ունենում անկախ նրա կամքից և գիտակցությունից, դրանք իրականանում են գործունեության մեջ և կախված են նրա բնույթից: Երեխան մտապահում է այն, ինչի վրա գործունեության ընթացքում նրա ուշադրությունը կենտրոնացած էր, ինչը նրա վրա տպավորություն է գործել և հետաքրքիր է:

Մենք մեր ուսումնասիրությունները անցկացրել ենք Արտաշատ քաղաքի թիվ 7 մանկապարտեզի երեխաների ավագ խմբում: Ժամանակի ընթաքում՝ դիտման, զրույցի և պրոյեկտիվ մեթոդների արդյունքում, խմբի երեխաներին բաժանել ենք ըստ հետաքրքրությունների. ստացել ենք պայմանանական երկու խումբ.

- Ստեղծագործական աշխատանքում ակտիվացողներ,
- Խաղային գործունեությունում ակտիվացողներ:

Պայամանական առաջին խմբի երեխաները առավել ակտիվ իրենց կարողությունները դրսևորում նկարելու տարբեր՝ ավանդական և ոչ ավանդական ձևերի, պատմություններ հորինելու և այլ ստեղծագործական աշխատանքների ժամանակ: Երկրորդ խմբի երեխաները առավել ակտիվ են ինքնադրսևորվում խաղերի ընթացքում՝ որոշները դերային, որոշները՝ կառուցողական:

Յուրաքանչյուր խմբի երեխաների ծնողների հետ նախնական պայմանավորվածություն ենք ունենում, որ ամսական մեկ կամ երկու օր /հաշվի առնելով ծնողների հավանական զբաղվածությունը և ֆիզիկապես պրոցեսի մեջ

գրավվելու անկարողությունը/ երեխան իր համար շատ հետաքրքիր գործընթաց խաղ, նկար, պատմություն սկսում է մանկապարտեզում՝ դաստիարակի և/կամ իր հետաքրքրությունները կիսող խմբակիցների հետ: Աշխատանքը փորձում ենք թողնել անավարտ՝ պայմանով, որ երեխան պետք է այն շարունակի տանը՝ ծնողի /խնամակալի/ հետ:

Այսպիսով, մեր նախնական վարկածն է, որ անավարտ պրոցեսը կմոտիվացնի երեխային այն անպայման ավարտելու՝ մանավանդ, երբ պրոցեսում ներգրավվելու է իր ծնողը: Պրոցեսը թույլ է տալիս երեխային ստեղծագործել, անավարտ պրոցեսը ծնողին ներկայացնել, համատեղ աշխատել, ապա վերջնական արդյունքը ներկայացնել խմբում դաստիարակին և ընկերներին: Աշխատանքի արդյունավետությունը գնահատվում է ծնողի և դաստիարակի կողմից՝ թույլ տալով երեխային խախտել պայմանական որևէ արգելք (ենթադրենք հեռախոսով որոշ ժամանակ մուլտեր նայել և այլն) կամ որևէ խրախճանքի վայր տանել (թատրոն, կինո, ատրակցիոն՝ երեխայի ցանկությամբ):

Արդյունքում՝

- Մոտիվացնում ենք երեխային՝ ըստ իր հետաքրքրության,
- Ներգրավվում ենք խմբային աշխատանքի մեջ,
- Երեխան բավարարվածություն է ստանում, որ աշխատել է ծնողի հետ, քանի որ այս տարիքում նրանց համար շատ կարևոր է համատեղ աշխատանքը
- Երեխան կարողանում է ներկայացնել ողջ խմբին իր կատարած աշխատանքը՝ ինքնադրսևորվելու հնարավորություն է ստանում:

Աշխատանքի նման մոտեցումը ենթադրում է մանկավարժ-երեխա-ծնող համատեղ աշխատանք: Երբեմն երեխաների կարողությունները ակտիվացնելու միտումով անհրաժեշտ է նաև հոգեբանի միջամտություն, որպեսզի պարզենք վերիջինիս հետաքրքրությունները և ավելի ճիշտ միջոց ընտրենք:

Նկար 1-ում պատկերված է խմորով տիկնիկ պատրաստող երեխաների խումբ: Խմբի երեխաները դաստիարակի օգնությամբ պատրաստել են խմորով տիկնիկներ, որոնց գունավորումն ու հանդերձը արվել է տանը՝ ծնողների հետ և որոնց մասին երեխան պատմել է հորինվածք:

Այսպիսով՝ մենք մեկ ստեղծագործական խաղի միջոցով փորձեցինք մոտիվացնել երեխային, կենտրոնացնել կամածին ուշադրությունը, ակտիվացնել երևակայությունը, աշխատացնել մոտորիկան: Երեխան ստացավ բավարավածություն՝ կատարելով իրեն հաճելի աշխատանքը՝ միևնույն ժամանակ արժանանալով դաստիարակի և խմբակիցների ոգևորությանը, ինչպես նաև ծնողի խրախուսմանը:

Նկար 1

Նկար 2

Եզրակացություն

Այսպիսով՝ տեսական և գործնական մեր վերլուծությունները թույլ են տալիս եզրակացնել, որ երեխայի համար կարողությունների զարգացման համար անհրաժեշտ է ծնող-երեխա-դաստիարակ համատեղ նպատակի մշակումը՝ նկատի առնելով երեխայի ներուժը, կամային հատկությունները։ Անհատական մոտեցման սկզբունքով՝ անհրաժեշտ է համապատասխան, երեխայի համար հաղթահարելի պրոբլեմային իրավիճակներ ստեղծել, ապա աստիճանաբար բարդացնել խնդիրը։ Կարևոր է նաև արհեստական սահմանափակումների առկայությունը։ Սահմանափակումները պետք է կիրառվեն որոշակի մեխանիզմով՝ բացառելով արգելքը, այսինքն՝ այն ամենը, ինչ երեխայի համար բացարձակ թույլատրելի է եղել, այդուհետ պետք է տրվի որոշակի ժամի՝ կոնկրետ խնդրի հաղթահարման դեպքում՝ որպես խրախուսանք։ Այսպիսով, մոտիվացնելով երեխային՝ մենք խրախուսում ենք երեխայի կարողությունների ձևավորմանը։

Ամփոփելով վերոնշյալը՝ մենք կարողությունների խթանման համար առանձնացրել ենք հետևյալ կետերը.

- Նախադպրոցականի կարողությունների ձևավորման համար անհրաժեշտ է հոգեբան-մանկավարժի հետ պարզել երեխայի հետաքրքրությունների շրջանակը;
- Հիմք ընդունելով երեխայի անհատական առանձնահատկությունները և հետաքրքրությունները՝ մշակել աշխատանքային պլան;
- Աշխատանքները պետք է իրականացվեն ծնող-երեխա-դաստիարակ՝ որոշ դեպքերում նաև այլ մասնագետներ՝ հոգեբան, լոգոպեդ մոդելով;
- Ծնողի կողմից պետք է պայմանական սահմանափակումներ կիրառվեն, որոնք չեն հանդիսանա որպես արգելք, այլ թույլատրելի կլինեն կոնկրետ խնդրի հաղթահարման պարագայում;
- Կարևորում ենք անհատական մոտեցումը և պարտադիր ցանկացած (թե լավ, թե վատ) արդյունքի գնահատումը։

Գրականության ցանկ

1. Արզումանյան Ս. «Հոգեբանություն»; Երևան-2003թ
2. Урунтаева Г.А., Дошкольная психология. – М., 1997
3. Мухина В.С. Возрастная психология: феноменология развития, детство, отрочество. – М., 1999
4. Морозова Е.Ю. Роль куклы в воспитании современного дошкольника//Детский сад от А до Я научно-методический журнал для педагогов и родителей. №5, 2005, стр.76-82
5. Немов Р.С., Психология. Кн. 1,2. – М., 1994
6. https://www.irtek.am/views/act.aspx?aid=110684